— Քո քոյրերն այսպիսի ականջի օղեր ունե՞ն, — եւ ցոյց էր տալիս իրը: — Տե՛ս, եղբայրս է առել:

— Չունեն, — պատասխանում էի ես:

— Բա դու նրանց չե՞ս սիրում:

Հարսներից մէկը հարցրուց.

— Քո նշանածը քանի՞ տարեկան է:

— Ես նշանած չունեմ, — պատասխանեցի:

— Հը՛մ, դու երեւի քաջ տղայ չես, որ աղջիկները քեզ չեն հաւնում, — նկատեց նա ծիծաղելով:

— Կարելի է դա նրանց չէ հաւնում, — մէջ մտաւ միւս հարսը:

— Կարելի է վարդապետ է ուզում դառնալ, — ասաց մեծ մայրը:

Բայց իմ սիրտն այնքան լցուած էր, որ ես այս կատակները ախորժակ չունէի լսելու: Իմ պատասխանները լինում էին սառն եւ անհամ, այնպէս, որ նրանք շուտով ձանձրացան:

Բայց տանտիրոջ որդիքն ամենեւին խօսակցութեան մէջ չէին մտնում, երեւում էր, հօր մօտ համարձակութիւն չունէին խօսելու: Իսկ բոլորը զինոորուած էին. ինքը տանուտէրն իր ծեր հասակով գօտկում խրած ունէր մի զոյգ ատրճանակներ: Երբ ես հարցրի, թէ խաղաղութեան ժամանակ, իր օթեւանի ծածկի տակ, ի՞նչ պէտք կար զէնք կրելու, տանուտէրը պատասխանեց.

— Մենք մեր ձեռքը մեզանից չենք կտրում, եւ դէն չենք գցում, երբ որ անգործ ենք մնում:

— Բայց ձեռքը մեզ ուրիշ ժամանակ պէտք է:

— Սուրն էլ նոյնպէս, — ասաց նա, եւ ապա աւելացրուց. — աստուած բոլոր անասուններին զէնք է տուել, որովհետեւ թշնամի ունեն: Մարդուն զէնք չէ տուել, բայց խելք է տուել զէնք շինելու: Անասունը իր կարճ խելքով միշտ իր զէնքը իր վրայ է պահում, բայց մենք յիմար կը լինէինք, թէ առանց զէնքի մնայինք, որովհետեւ մեր թշնամին աւելի կատաղի է:

— Ո՞վ է մեր թշնամին, — հարց արի ես միամտաբար, ծերունուն փորձելու մտքով:

— Չե՞ս իմանում, քո ձին ո՞վ գողացաւ, — հարցրուց նա:

— Քուրդը: